

— Դատ աղէկ. ըսել է որ երկու, երեք
Հնդիկը կը ճենճերին:

— Ինչ ըսել կ'ուզես:

— Իսկ կ'ուզեմ որ Հնդիկը իրենց մե-
ռելները չին թաղեր հողին տակ, ինչպէս
մենք սովոր ենք ընելու. հապա գիտե՞լ
կասկարայի մը վրայ գնելով՝ խարոյկը կը
վառեն, ու կը թողուն որ կրակը մինչև յե-
տին կտորը մաշեցնելով մոխիր դարձնէ:

— Ուրեմն այս իրեք Հնդիկք ալ ըսել է
որ վաղը առտու մոխրոյ կոյտ մը պիտոյր
ըլլան, գոր քամին այն պարսպապատ մի-
ջոցին մէջ առնու ցրուէ պիտի:

— Եւ յիրաւի ալ այդ այդպէս է: Եւ
գարմանալու չէ Հնդկաց այս սովորութեան

վրայ, և ոչ իսկ բարբարոս բան համարե-
լու է: Հին տառն ալ կար այս սովորու-
թիւնը. և նոյն իսկ հիմա յԵւրոպ գար-
ձիակ նոյն յարուցանելու հետամուտ են,
ինծի աւելի բարբարոս ու քստմնելի եւ
ընցած է միշտ Փարսիներուն յուզարկա-
ւորութեան արարողութիւնը: Սակայն այս
երկու տեսակ տարողութիւն մօտանց
տեսնալը ուրիշ առթի թողուլը լաւ է. և
թէպէտ երկրորդներուն տեղւոյն այցելե-
լը գծուարին ըլլայ, կը ջանամ բարեկամի
մը ձեռք գիւրացնել:

Մեր խօսակցութիւնը զմեզ մինչև պտն-
դոկը բերաւ, ուր իրարու գիշեր բարի
մաղթեցինք:

Շարունակելի.

Հ. Յ. Վ. ԻՍԱԿԵՐՏԵՑ:

ՄԵԾ ՀՐԳԵՀ ՄԵԻԹԱՐԵԱՆ ՎԱՆՈՒՑ

1883 ՏԱՐԻՈՅՆ ՅՈՒԼԻՍԻ 14ԻՆ

Ա.

Միտիթարեան Ուխտին յիշատակարանաց
մէջ, 1883 տարւոյն, Յուլիսի 14ին գիշերն ա-
ղետալի ցաւաց յիշատակ պիտոր մնայ: Շարաթ
գիշեր էր և վենետիկեան հնաւանդ տոնսփրմ-
բութեան մը տարեգարք, որ տարուէ տարի
ողջոյն քաղաքը և անոր շրջակայից զբոսասէր-
քը՝ մեծ շարժման մէջ կը դնէ:

Ձերմ, խղճուկ, անհանգուստելի տօնոյ ցո-
րեկը՝ երեկոյեան մութին որ տեղիք կու տար,
մեղմ քամի մը հարաւէն շնչելով՝ քիչ մը զով
կը ախուր այն ընդարձակածաւալ լճակին վը-
րայ: Աշխատութենէ և աւելի ջերմէն խոնջ՝
հանգստեան առանձնարանս կը փութայ. Ժաւ
մը երեկոյեան գրեթէ ինն էր: Առ վայր մը
պատուհանի մը առջին կը դադարիմ, ուսկից
տեսարանը հեռու հեռու կը ձգի մինչև ծառա-
զարդ կղզեկաց սահմանը: Այն լճակին խաղա-
ղաւէտ երեսին մրայէն, հարիւրաւոր սրարդաւ
կոնտուլոյք, գունազոյն կանթեղք գարդարեալ,
քաղաքէն դէպ 'ի Լիտս կղզին՝ Ագրիականին
ծովափը՝ կը գիմեն: Հոն՝ այն հուշակաւոր ծո-
վային բաղանեաց զբոսավայրը՝ հազարաւոր
մարդոց թաղմութիւնը՝ կերտաւորով, երաժշ-
տութեամբ, թատերադրութեամբ ու պարով՝
ողջոյն գիշերը յանգ պիտոր հասնէ: Արդէն
կղզւոյն երեսը լուսոյ մէջ ընկզմած կ'երևի.

լուսաւորութեան անհամար կանթեղաց լոյսը
անդորր ջրին վրայէն անդադառնալով՝ կեդ-
րոն վայրը հնոց մը կը նմանցընեն. մինչդեռ
պարտիկաց ծառոց ետեւէն մերթ ընդ մերթ
հրախաղութեանց փայլատակունք կը հատա-
նին: Մարդոց աղաղակը, կատաց աղմուկը,
երաժշտութեան շառաղ՝ միանգամայն իրարու
խառնուելով՝ այն վայրը կը վրդովեն: Որչափ
ուրախութիւն, որչափ յոյս, որչափ երջանկու-
թեան զգացմամբ արդեօք այն երիտասարդ ամ-
բոխին սիրտը կը բարախէ:

Այլ ես բարեբաղդազոյն կը համարիմ գիս
առանձնութեանս հանգիստը ամփոփուելու, և
ողջոյն այսպարհիս բարի գուարճութիւն կը մաղ-
թեմ: Թմրութիւնը չի յապաղեր անզգայութեան
մէջ գիս ձգելու. և թուր թէ այն վիճակը մտեր
է՞ի՝ որ ոչ արթնութիւն է և ոչ խորին քուն. և
ահա մերձաւոր աղուղակաց շփոթ կը սկսի ա-
կաննալ խայթել. ուրախութեան թէ սպանա-
լեաց ու երկկիզի ձայնք էին, չէի կարող ըմբռ-
նել. բայց կը համարէի թէ մերձաւորքս 'ի հե-
ռուստ խնդակից կ'ըլլային զբոսասիրաց: Բայց
և այնպէս շփոթ գաղափարքս չէի կարող հաշ-
տեցնել. ինձ անպատշաճ կը թուէին այն ձայնք
և հակառակ բարեկարգութեան:

Թուր թէ ըստ բաւականի երկայն տևեցին
այս թմրութեան խորհրդածութիւնք, առ սա-
կաւ սակաւ անզգայութիւնս թեթեւցնելով՝ երբ
յանկարծ ամուր մը ցնցուեցայ ու սարսափով

վեր նետուեցայ. սիրտս ամուր մը կը բարա-
խէր: Արտաբուստ ձայնը կը սաստկանային, և
որ չարագուշակն էր՝ աւելի աղմկի ու երկիւղի
կը թուէին քան թէ ուրախութեան: Գէպ 'ի
պատուհան կը նետուի ու գլուխ դէպ 'ի հա-
րաւ կ'երկնայեմ: Դէնք լուսաւորուած կ'ե-
րևնայ. արդեօք ձախորդութիւն մըն է. սիրտս
յուսոյ ու երկիւղի մէջ կը վարանի: Գէպ 'ի
գլուխ կը փազեմ ստուգութիւնը փնտելով: Տէր
Ատուած, ինչ ահաւոր տեսարան. սենեկէս
երեսուն չափ անդին ողջոյն սրահը բոցերու մէջ
է: Մի և նոյն ատեն տխուր դանգակի մը ող-
բական ձայնը սրտիս վրայ լքում էր բերէ: Աւ-
տարակոյս չկար. զարուհեցի հողերէ մը հա-
րուածը Մխիթարայ ձեռագործ դարական
տունը բնափնջ ընելու կը պառնար:

Բ.

Թէ ուստի կամ ինչ պատճառէ կրակը ծա-
գած ըլլայ՝ մտնկենաւոր գաղտնիք մը պիտոր
մնայ. որովհետեւ այնպիսի տեղ սկիզբն ըրաւ,
ուր չարագուշակն յաճախութիւն չկար, և եթէ եր-
բեք մէկը մերձեցար այն տեղոյն՝ հարկ էր կա-
նոնին ապսպրած զգուշութիւններովն ընէր:
Միայն այս ստոյգ է որ նոյն յուլիս 14ին օրը,
վանուց գլխաւոր մտից վրայի սենեակները ըը-
նակողքի՝ սաստիկ և անսովոր ջերմութիւն զգա-
ցին. այլ պատճառը նոյն սրբուր. ամառային
ջերմութեան տուին:

Սենեակած ամենեւին սպառնացած վտան-
գէն, որ թուի թէ շատ իսկ կանուխ սկսած էր,
երեկոյն վրայ հասաւ. և մինչդեռ յետ ընթի-
րեաց աշակերտը ըստ սովորութեան 'ի հան-
գիստ կը պարսպէին իւրեանց դասարանը, որ
հանդէպ կայ վանուց գլխաւոր մտից, յանկարծ
բոց ու ծուխ տեսան, որ տանեաց կողմտից
տակէն ու ձեղունամիջին լուսամտէն վեր եր-
կնիքը կը բարձրանար: Զարուհած այն տես-
լենէն՝ իսկոյն ազդը տուին անկասկած միա-
բանից: Այլ մի և նոյն ատեն նաև բակին ծաղ-
կոցը բազմոդ միաբանք նոյն բոցն ու ծուխը տե-
սան, որ ահաւորապէս կը սաստկանար, և ահա
բեկնած՝ սպառնալիքին տեղը հասան. դուռ,
արդեօք, ինչ կար՝ խորտակուեցաւ, և ոչք կարող
եղան 'ի ձեղունամէջը մտին. և ահա իրենց ա-
շաքը ներկայացաւ այն տեսարանը, որու ամե-
նեւին անփորձ էին, և որու աղէտայիթութիւնը
միայն միաքը կրնայ ըսբանել: Հոն հատածոյ
թղթոց կցածք այլ և այլ հնոցներու ամբողջու-
թիւն մը ձևացուցած էին, որք առ փոքր փոքր
տարածուելով՝ ինչ պրելի նիւթ կը գտնէին՝
բոցերով կը պատէին, ամեն բան լափելով, ա-
մենայն ինչ սպառելով: Վերէն ծածօքին գե-
րանցելը բացավառ, վարէն տախտակաձաձը

բռնկած. բոցերն՝ որ խաղաղով առդիս անդին կը
բռնկեցնէին, խղճող ծուխն՝ որ այն գոց տեղ
կենայր անհանդուրժելի կ'ընէր, այս ամենայն
հոն մտողաց սիրտը վերջին աստիճանի լքման
մէջ ձգեցին. այն ահաւոր հնոցին դէմն առնելը
անհնարին էր, և այն սակաւ ջուրն որ անօթ-
ներով փութացեր էին կրելու՝ կրակը լափեց
ունայնացուց, Հարկ էր տեղի տալ, վայրկեան
մը յառաձ փախչիլ այն դժոխային տեղէն, եթէ
չէին ուզեր չնչապաւ կորսուիլ. յուսաբեկ և
լքեալ՝ թողին տեղին իւր ձախտագրին ու փու-
թացան այլուր:

Մի և նոյն ատեն այն սակաւ սպասաւորը, որ
ներկայ կը գտնուէին 'ի վանատուն, իրհանր
կազմեցին և սկսան արիւարար բալին ծաղիւ-
ցէն բոցերու հետ կռուիլ: Բայց ինչ յուսով
էր այնպիսի ահաւոր դէպքի մէջ անանկ անհը-
մուտ մարդիկներէ, որ ոչ երբեք կրակ տեսած
էին. թող որ գործուոյն անկատարութիւնն ա-
մենեւին անօր էր յաղթանակելու այն հնոցին,
որ քամիէն հետ զհետէ շուշ առնելով՝ շարու-
նակ կը տարածուէր, կը բռնանար ու ծխա-
խառն վեր կը բարձրանար, և երկուստեք դէպ
'ի հիւսիս ու դէպ 'ի հարաւ կը քալէր: Թէ-
պէտ տմեն անհնարին ճիգն կը թափէին՝ բո-
լոր իրենց աշխատութիւնն ունայն էր. հողմը,
օրուան ջերմութեան հետեանքը, և գերանաց
ու տախտակաց դարական չորութիւնը՝ ամե-
նայն մարդկային ձգանց կը յաղթանակէին:

Ժամանակը կ'անցնէր, և կրակը իր կատա-
ղութեանը հակառակորդ չգտնելով՝ ձեղունա-
միջին վարի յարկը կ'իյնէր. արդէն սկսած էր
շննել միանձանց սենեակներն՝ որ հոն մօտ կը
գտնուէին: Հոն մօտ էին նաև մեր երանալը-
նոր՝ հիմնադրին սենեակը. այն պարկեշտ քնա-
կարանք ուր գրեթէ երեսուն տարի առաքինի
կեանքը անցուցած էր, և ուր օրհնած էր իւր
որդիքը մինչդեռ առ իւր ստեղծին կը փո-
խուէր: Որչափ յիշատակաց ընդունարանք չէին
այն ճգնաժամային ապաստանարանք, և որչափ
փափոսգելի չէր մեզ փրկել անոնք, ուր հանա-
պազ Մխիթարայ ողին կը տեսնէինք: Ուսկայն
այն ահաւոր բոցերուն դէմն առնել անկարող
էինք. արդէն իսկ այն անձկայի սենեկաց գե-
րանք սկսեր էին այրիլ, և մեր սիրտը կը փրշ-
կէր կորուստը անգարամանելի տեսնելով: Եւ
սակայն դեռ ևս յուսոյ թել մը մեր սիրտը կը
յուսացնէր թէ կարելի էր փրկել այն սենեկաց
գոնեայ մին, շատ էր որ քաղաքէն գալի օգնու-
թիւնն այլ ևս չյաջողէր. մանաւանդ որ կրու-
կը աւելի դէպ 'ի հարաւ կը քալէր, յամր յա-
ռաջելով դէպ 'ի հիւսիս ուր դեռ ևս անա-
րատ կը գտնուէր հիմնադրին աշխատութեան
սենեակը: Հիմաւորց չէնքին կազմութիւնն
իսկ 'ի նպաստ կու գար մեր այս յուսոյն. վան-
գի նստի քարալէն որմունք, երկրակող յարկաց

գործ սուրբ մը, միայն Աստուծոյ ձեռքը կրնոր մեր յրիսպատ չուրը ցամքեղընել, և կամ ուրիշ աներևոյթ ճամբով այն զօրաց խումբը մեր քովը հասցընել:

Մինչդեռ այն սպայից կ'առաջնորդեմ աղիւտից վայրը:

Զգոյ՛, կ'ըսեն, չըլլայ թէ քաղաքացի որ կըղզին ոտք կորէ: Գորջ սպայիսի ժամ կը փնտռեն իրենց ազատ ելումուտին:

Եւ ի դէպ էր խորհուրդը: հազիւ քայլս ուրիշ կողմ մը կ'առնում, աննշան երիտասարդաց խմբիկ մը զգիւ կը դիմաւորէ: անոնց օգնելու, ձեռք տալու ցուցած փոյթը, պատրաստակաւ նութիւնը, յօժարակամութիւնը՝ միտքը կասկած կը ձգեն: անոնց արտաքին երևոյթին իսկ այս կասկած աւելի կը սաստկացընեն, որովհետեւ բաւական իսկ զգեստ չունին վրանին: փոխանակ վտանգին տեղը իրենց առաջնորդելու՝ ինչպէս կը խնդրեն, զիրենք ետ կը վառեմ: և մինչդեռ արտունջ կը բառնան ու կը բողբոջեն թէ ուղիղ սրտիւ և միայն մարդասիրութենէն մղեալ՝ փութացեր են չիտակ ճամբէն գոյու, բռնադատեալ՝ պատը կը մազլցեն և անդին իրենց պատրաստ նաւակը կը կործանին՝ ուր այլ ընկերք իրենց կը մնան: Եթէ կրաւէն չէ գտնէ գողութեան հարուածէն ազատեր չէիք: Քիչ մը ետքը զօրաց խումբ մը նաւակներ գրաւելով կղզին թափեղան, և ամենայն ուղղութեամբ չէնքին մէջ գրուելով, ոմանք ի պահպանութիւն գրազեցան և այլք ի փրկանս:

Եւ աստ ի դէպ է երախտագէտ ձայն մը բառնալ ի գովեստ այս գորակիւնին: որ նոյն աղիւտից զինքը ժամն ձիգս ոգով չափ վտանակեցան, և մեզ լքելոցս և անձարկեցելոցս օգնութեան ազգու ձեռք մը ստին: Եթէ այս արի և անձնանուէր զօրականը չըլլար՝ շատ բան հոյ ճարակ կ'ըլլար:

Խառնացի զինուորը թշուառութեան ապստամանարանն է: ուր վտանգ կայ, ուր ցու կայ, ուր ձախորդութիւն կայ, խառնացի զինուորը հոն կը գտնես, որ բարերար ձեռքը վտանգելոյն, թշուառացելոյն կ'երկնցեն: և շատ այն է որ զիսգազնական անձնուարացութեամբ վտանգաց զիմազրաւ երթալով՝ մերձաւորին փրկուութեանը համար ինքզինքը կը զուհէ: Ոչ միայն պատրաստական է պատերազմի ժամանակ հայրենեաց փրկութեանը համար աներկիւղ իւր արիւնքը թափելու, այլ և խաղաղութեան ժամանակ իւր բարեգութիւնը իսպառելու կը հսկէ հաստ: բակաց բարօրութեան: Զկայ գովեստ որ բոստ արժանաւոր գրուաւո՞ւ անոր արժանիքը: Անոր համար ալ իրաւամբ ժողովուրդը գազաց կը պալատէ իւր զինուորականքը, և ամեն առիթ ի կիր կ'առնու: իւր երախտագիտութեան եռանք գուն ցոյցը անոնց տալու:

Դ.

Զինուորականաց դաւանանք ամենուս վրայ արիւթիւն ու յոյս տպաւորեց: այսուհետեւ լքեալ ու մոռացեալ չէինք: Սակայն եթէ կահուց փրկանքը կը հոգացուէր, միւս կողմանէ հոյ ըւժութիւնը կը սաստկանար և աւելի կը ծաւալէր: հարկ էր թէ իրճանք այլ ևս չյայտագէին, ապա թէ ոչ դիւանատունը անդարմանելի կորստեան վտանգի մէջ էր:

Ժամը տասնուկէս էր երբ մերձակայ կղզոյն երկու իրճանք իրենց սպառաւորներով՝ կըղզուցս գլուր մտան: և անմիջապէս կրակին դէմ կռուիլ սկսան: Բայց այս առնես հուր այն աստիճանի բռնացած էր՝ որ այն երկու իրճանաց ամենայն ձիգն դերեւ ի կ'ելլէր: Բորբոքեալ աւերակք հետզհետէ շատայմամբ կործանելով՝ տխուր դրդումներ օղը կը թնդացնէին: մարդոց աղաղակք, գործեաց թնդիւնք, հոյ ճարճատիւնք, բոցոյ սաստկութիւնը, ծիպ պարոյրը, կայծից գրումը՝ զժողայկին տեսարան մը կ'ընէին տեղին: կարծես գոռացող կատաղեալ ծովու կեդրոնն էինք, և շարժանակի տարերք կատաղաբար զիրար սպառելու կը կռուէին: Մենաստանին բնակութեանց մեծ մաս մը բորբոքեալ կ'այրէին: Հայց քնակարանքն, աշակերտաց ննջարանն, Մխիթարայ ոմենակք, ամեն առ հասարակ բոցերու մէջ էին: Երկին իրճանք անդադար չրով կ'ողողէին, այլ չուրը շառաշմամբ շողիւնալով՝ կարծես կրակին ծուխըն ու բոցը աւելի կը բորբոքէր: Սակայն շառաւակեալ աշխատութիւնը կամաց կամաց բոցերուն յառաջագիւնութիւնը կը սկսի յամրացընել: դեռ ևս յուսոյ նշող մը սրտերին կը մտանէ, որ եթէ քաղաքին հզօր իրճանք հասնին՝ չիւնին մնացեալ մասը կը փրկուի: Բայց եթէ ժամ մըն այլ ևս յայտագէ՞ ամենայն ինչ կորստած է: արեւն որ ծագէ Ս. Ղազարու կղզոյն վրայ՝ մոխրոյ կոյտ մը միայն պիտոր տեսնէ:

Որչափ ալ մարդկային անհնարին ճգունք մէկ կողմանէ կը յաղկին հոյոն աստուծութիւնը ամբողջ, չեն կրնար խափանել որ ուրիշ կողմէն ինքն իրեն ճամբայ չառնայ: Քսմին որ առ վայր մը ինչեր էր, հիմա դարձեալ կը սկսի սաստկանալ, և կրակը որ դիւանատան չէնքին հասած էր, իրեն երկու ճամբայ կը բանայ դէպ յարեւել: մէկը վարդապետաց սենեկաց վրայէն դէպ ի երիցադոյն աշակերտաց վարժարանը կը դիմէ: միւսը արքայարանին սենեկաց վրայէն դէպ ի գրատունը: Հողմը որ զբոցերը առատաւորն միջէն կը մղէ՝ առ վայր մը դիւանատունը յապահով կ'ընէ: սոսկայն երթալով կրակը զինքը երկու կողմանէ կը պաշարէ, և վայրկեանէ վայրկեան կրնայ անոր ալ ընդհարիլ:

Արտիս տագնապը առ վայր մը իջնցնել ուզե-
լով՝ աղիտից վայրէն կը հեռանամ, և ծովակին
վրայէն ուղքս դէպ 'ի քաղաքը կը ձգեմ. մի և
նոյն ատեն ժամաւարը՝ գիշերային տանքովէն
կը զարնէր. Հեռաւորութեան մէջ չարժող լոյ-
սեր կը նշմարեմ. լոյսեր՝ որ երազարար դէպ 'ի
մեզ կը յառաջեն. սիրտս ամուր մը կը բարա-
խէ. արդեօք ակնկալած օգնութիւնն է. դեռ
ևս տարակուսմ մէջ կը մնամ: Այլ լոյսք երթա-
լով կը մերձենան, և լոյսերուն հետ ազմուկ կը
լսուի. չիք տարակոյս. չոգեչարքին շառաւն է-
փրկութիւնը մերձ է կը կանչեմ, և յաւտ փառա-
հաթիւնը լքեալ սրտիս մէջ կը հաստատուի:
Նշախ կոնտրայսք կը հասնին ու վանեցոյ դուռը
կը մտնեն. քաղաքական իշխանաւորք են, որ 'ի
պարտուց' վտանգին տեղը հասնելու կը փութան
Անոնց ետևէն չոգեչարք հզօր իրհանք երազա-
րար կը հասնի, որու կը յաղորդեն հետզհետէ սոյլ
իրհանք քաղաքական, զինուորական ու նուա-
կան: Այն ժամէն Ս. Ղազարու դատակնիքը
լուծուած էր, և անոր պատուականագոյն մա-
սին սալքանաց յոյս կը տանար:

Ե.

Ա՛հ կ'ըսէի մէջ այն փորձ իրհանակիք ամեն
դէն կը թափանցեն. տապարք ծածքերուն վը-
րայ՝ կ'իջնայ, և լուրը հեղեւորէն բոցերուն վրայ
կը սկսի տեղաւ: Սակայն հոյ տարածութիւնը
շատ ընդարձակ էր՝ որ կարենային փութով չի-
նուր տեսնել: Պոգեցն եօթնասուն մեզը
երկայնութեամբ՝ ճակատը բորբոքեալ կ'այրէր,
թող այն երկու ճիւղը որ դէպ յարեւել կը քա-
լէին: Բայց և այնպէս չոգիտարժ իրհանք, ու-
րու ահաւոր խողովակը չորս հոգի հազիւ կա-
րող էին դուստ ունելով ուղիւ, իրի ահաւոր
սիրակ մը մեծ բարձրութեամբ վեր կը նետէր.
անոր բաղդմանը ուռիկն՝ աղիւն չէնք կ'երե-
րար, և խանձողք խախտելով շառաւմամբ կը
կարծաէին: Արդէն յառաջադէմ էին ըստ
բաւականին, ուերակալող ու ծխոյն միջէն ոտն
որոտ րոցերը հալածելով, երբ իրհանակալող
պատուորը, իր եռանդեմամբ և աներկիւղ կը շա-
հատուէր՝ ամեն մէկին հրամաններ տալով,
յանկարծ սնուշաբորթեամբ խորխորեալ որ-
մի մը մերձեցաւ. քար մի՝ որ կարծես առթի
կը սպասէր, որմէն բաժնուով դէպ ուղիղ
գլխուն ինկաւ. բայց այն եռանդուն երիտա-
սարդին ժամը չէր զարկած. գլխոյ փոքր շար-
ժում մը բաւական եղաւ մահացու հարուածէն
զինքն ազատելու. սոյլ ուսին վրայ իջնալով՝
հարուածեց ամուր մը և միբաւորեց. բայց և
այնպէս տեղի չուտա իր պարտուց առկն մին-
չև ցլիւր: Սակայն այն հարուածն աղէտալի ե-
ղաւ սպաւ. քանի մը եօթնեկալ հրամանութենէ
ետքը թէպէտ և կանգնեցաւ, սոյլ զոյսին սոյլ-

այլութիւն մի դեռ ևս կը շարունակէ, զինքը
աւտաթափ ընելով:

Աինչպեւ չոգեչարք իրհանք առջևէն բոցերը
կը հալածէր, յետուստ դարձեալ կրակը բռն
կը սաստկանար. և այնքան աւելի կատաղու-
թեամբ՝ որքան արդի չէնքի կազմութեան ոճը
դիւրակեց կ'ընէր զայն. զոգեցն թղթեայ ը-
լար այնպէս կը ուսուէր: Հարկ կ'ըլլար որ իրհա-
նակիքը միասնազամ ետ գառնային նոր վտան-
գին առաւին առնելու:

Աինչպեւ. առնաք այսպէս կը ճգնին, միւս
իրհանք այլ և այլ կողմերէ կրակը կը պատեն, և
ըստ իրենց ուժոյն՝ անոր սաստկութիւնը կը զրս-
պեն. բայց կրակը դիւանատան շորս կողմը կը
պատէ և փայտեայ դրան կ'ընդհանրու: Անձկու-
թեան և արհաւիրաց ծայն մը ամենուս սրտէն
կ'արձակուի. գրեթէ երկուց դարուց պատմա-
կան գրուող քանձք՝ անդարմանելի կորուստակ
տող մատուոխն: Վտանգն սալքերնուս չերենար.
մեր արտին անձկութիւնը զմեզ կը մղէ այն
գոժողոց տեսարանին մէջէն անցնիլ երթալ, և
այն անձկալի գտնէր ազատել: Բայց սոյլ յան-
գուզն մուսթութիւնը գլուխ տանելը անկարելի
է. ով յանգուզնի այն բոցերուն մէջ ինքզինքը
նետել՝ մէյմըն ալ ետ դառնալ չկրնար. խան-
ձողք, բոցն ու ծուխը վայրը անմատչելի կ'ը-
նեն. և սակայն փոյրկեանէ վայրկեան այն
դուռը կրնայ բռնկիլ, որմէ ետքը ամենայն ինչ
կորուսած է:

Բարեբաղդ դէպք մը այս վշտէն զմեզ կ'ա-
զատէ. հողմը որ առ վայր մը նուազեալ էր՝
յանկարծ ամուր մը կը շնչէ. բոցն ու ծուխը
դէպ յարեւել կը մղուին սաստկագին, և նեղ
անցք մը կը մնայ դիւանատան ու խանձողաց
մէջ: Վանեց առաջնորդը, որ իբր յետին 'ի
հպատակից վտանգին ամեն դէն կը գտնուէր,
նախ ուսովին կը դիմադրաւ, դուռը կը խոր-
տակէ ու ներս կը նետուի. բայց այն անձուկ
ու խղճուկ տեղւոյն մէջ կենալը անկարելի է.
Ժուխն այնպէս լցուցած է տեղին՝ որ շնչելը
անկարելի է, և մուտքը խիթալի: Սակայն
հարկ է մանչել. հարկ է այն գտնէր պատհալել-
արիաքար դէպ 'ի պատուհանները կը նետուի,
կը խորտակէ, կը բանեց, և հողմը մէկ վայր-
կեանի մէջ տեղին կը մաքրէ: Այլք առաջնոր-
դին կ'անձուցէ փրկանքը պատուհաններէն կ'ը-
լուի. մինչպեւ միաբանից խումբը 'ի ստորև գա-
նալք ժողովելով կ'ապստովէ հեռու 'ի վտանգէ:
Բայց դիւանատան մէջ ուշանալը ամենաթիւ-
թալի է. հողմը կարելի է վայրկեանէ վայրկեան
խոր ուղղութիւնը փոխէ. և եթէ այն մի միայն
անձուկ մուտքը և սանդուղքը պողպատէ, ներքը
նաւատակողաց կենալքը վտանգի մէջ կը դնէ.
որովհետեւ տեղւոյն բարձրութիւնը անոնց փա-
խուստը անկարելի կ'ընէ: Զինուորաց խմբիկ

մը այս վտանգը կը տեսնէ, և աներկիւղ հոն կը յարձակին, փրկանալու ձեռք կու տան, և կը ստիպեն զամենը փութով խոյս տալու: Եւ արդէն ժամ էր. սակաւ մի ևս և այն անձուկ ասնդուղը բացերէ պաշարեալ՝ ոչ ումեք անցք պիտոր նորհէր: Ամենը աներկիւղ ետեւէ ետեւ այն ասնդգէն վար աւելի կը կործանին քան թէ կ'իջնան. այլ ամենը ողջանդամ և անդորրափրտ. մինչև այնտին թղթիկը ազատած էր:

9.

Ժամը երկուք էր կէս դիւրերէն յետոյ. ամենը բքեալ, շնչասպառ աշխատութենէ. ստորին սրբաշէ գրեթէ ծնկել չար ծովային ջուրն լցուած էր, և դեռ ևս կը լցուէր. որովհետեւ այնքան էր չոգչարած իրհանին և միւս իրհանաց թափած ջուրն, որ վերի դատիկոնից սրահաց վրայ ծանրանալով՝ կործանելու չար կը վտանգէր: Խորհրդով վանուց ճարտարապետին, որ բարեբաղդաբար ներկայ էր հրդեհին, սրահուց քաղաչէ յատակը կը ծակուին, և ջուրն հեղեղօրէն իջնելով՝ ստորին սրահաց մէջ կը դիզուի: Հարկ էր որ այն արի զինուորը, ծխէն սևացեալ զիմք և աշխատութենէ աղտեղեալ ու թոյնալ հանդերձիք՝ այն դիզեալ ջրոց մէջէն երթնեկէին: Սակայն վտանգը իւր յետին սահմանը հասած էր. հուրն ամեն կողմէն առանձնացուցած էր և այնուհետեւ որ ինչ բռնկած էր՝ այն միայն կ'սայրէր, զոր հետզհետէ կը մտնէին: Չիմուորը խրեանց մարդասիրական գործը աւարտած էին և փողոյն կողմ հնչեց և հարիւր զորականաց խումբ մը ստորին սրահին մէջ իրենց շարքին կարգը առին Չուրը գրեթէ 'ի ծուռ կրս կը հասնէր. սպառք այն իրին մէջէն քայլելով անուանական հանգէն ըրին. ոչ ոք պակաս էր յեկելոց. այնքան վտանգին մէջէն ձախորդութիւն չէր դիպած, բայց 'ի յամանց թեթեւ վիրաւորելոց: Ելան մեկնեցան կողմէն, մեր շնորհակալաց օրհնութիւնը հետերնին տանելով: Եթէ այս զօրաց անձնամասոյց արիւթիւնը չըլլար՝ մենաստանիս կրած վնասը շատ աւելի ծանր պիտոր ըլլար. որովհետեւ անանկ դասն դէպքի մէջ մարդուս վրայ այնպիսի լքում կը տիրէ՝ որ անփոյթ կ'ըլլայ իր ստացուածքը փրկելու: Ինծի ըսողաց ոչ ոքս կամ այն առարկայն փրկեմ, տեսնելով թէ ինչպէս սղլոյն չեղ չնըր կը ջնլուէր, « Է՛հ, կ'ըսէի, ինչ օգուտ չնչին առարկաները ազատելէ՛ն՝ երբ տան հիմունքը կը ջնլուին » և անստոյգ և տարակուսեալ բոցերու կը նայէի: Պատուականացոյնք և անգտանելիք փրկելէն յետոյ, այն ամենայն

ոչինչ կ'երևար աչացս: Այս արի զինուորաց անձնամասոյց նուիրման պարտական ենք շատ առարկաներ փրկելու. սր արիւթար բոցերու ու խանձողաց մէջէն անցնելով՝ մերթ այս և մերթ այն առարկայն կը կորզէին ու վտանգէն հեռու կը տանէին. այսպէս մեր հարց կենդանագործ ողջոյն հաւաքում մը փրկեցաւ, թող այլ բազմաթիւ առարկաներ:

Ժամը իրեք ու կէս անցեր էր. դեռ ևս ջրահանք կը գործէին, այլ կրակին ծաւալումը զսպւած էր. խանձողը և այրելիք դեռ ևս կը շարունակէին բոց արձակել, այլ վտանգը անցած էր: Հորիզոնը կը սկսէր պայծառացալ դէպարեւելք, և լիտոյի գոտասիրաց բազմութիւնը կամաց կամաց կը սկսէր դէպ 'ի քաղաք դառնալ. մէկ կողմանէ զուարթութեան ծիծաղը կը դադրէր, միւս կողմանէ արհաւիրաց երկիւղը. սակայն ինչ տարբերութիւն վիճակի. որ սիրտ կրնար ապաց արտասառք բռնել այն դեռ ևս բոցավտու ու ծխող աւերակաց առջին: Այլ գար՝ որ դեռ ևս երեկուան օրով այնպէս շէն, մաքուր, գեղեցիկ ու ծաղկեալ՝ այցելուաց ապուրթիւնը կը գրասէր, արեւն որ ծագէ և իւր ըլլոր լուսովը տեսարանը լուսաւորէ, աւերակաց, խառնակութեան և աղտեղութեան վայր մը պիտոր գտնէ: Այն քառակուսի ծաղկանոցը, որոյ հոտաւէտ ծաղկանց բուրմը կը հիացընէր, արդ ոտից կոխան եղած՝ անվայելացած էր. ծաղկուէր խառնար, ծաղած խանձեալ: Իսկ վերը սրահից մէջ ինչ անպատմելի խառնակութիւն. կուռի գալտ մը կը նմանէր, ուր գլխը դալկու ու ռմրից կատաղութիւնն ամենայն ինչ լաթիւնաց, խորտակած ըլլար: Ամեն տեսակ կա՛հ, ամեն տեսակ նիւթ խառն իրարու վրայ կործանած կային. և անոնց մէջէն իրհանաց թափած ջուրը առուակներ չինած էր: Աղտեղութիւն, խառնա՛յութիւն էր ամեն դին ուր առաջ բարեկարգութիւնը կը տիրէր ու չեոր՝քը. տէր՝ Աստուած, արգեզ սա դժուարը նորէն պիտոր բարեկարգի:

Աղալայն մը որ սկսեր էր կարմրիլ՝ կամաց կամաց արեւուն գունտը հորիզոնը մուռց. պայծառ առաւօտ մըն էր և յոտակ երկինքը, այլ Ս. Ղազարապ վրայ ծխոյ ու բոցը նսեմութիւնը դեռ ևս կը տիրէր. սակայն իրհանաց բազմութեան գործը լնացած էր, ու հետ գլխտէ տեղի կու տային: Բայց և այնպէս երկու իրհանք մնացին իւր պահակ 'ի գգուչութիւն անանկական. զի դեռ ևս խանձողը աստ անդ՝ կ'այրէին, և մերթ ընդ մերթ կը բռնկէին ու բոց կու տային: Եւ տեւեց այս վիճակը մինչև հիւզարթի. որով եսքը որմուռորոց գործն սկսաւ:

Կը շարունակուի.